քերով. հաւանականօրէն կրում է իր մէջ հետքեր երկաթի, պղնձի, կապարի, քարածուխի, սնդիկի, աղի, նաւթի և տեղ-տեղ նաև ոսկու հանքեր և տեսակ-տեսակ քարեր, որոնք ճարտարապետական տեսակէտից շատ նշանաւոր են, որով հետև քանդակագործութեան մէջ կարող են գործածուել. այդ քարերը շատ կարծր են և դիմացկուն ու կլիմայական ազդեցութիւններին դժուարութեամբ են ենթարկւում։

Օդ, կլիմա: Դժբաղդաբար այս գաւառի և ոչ մի կէտում չկայ օդերևոյթաբանական կայարան, այնպէս որ անհնարին է կլիմայի մասին ճշդ գաղափար տալ, սակայն պիտի ասել, որ ընդհանրապէս Փէրիայի կլիման խիստ առողջարար է և հրաշալի իր բարձր և լեռնային դիրքի շնորհիւ, որտեղ ձմրան սաստիկ ցուրտ է անում. փչում է հիւսիսային քամի, շատ անգամ ձիւնաշատ, և խոր ձիւնը բոլոր լեռներն ու դաշտերը ծածկում է ձիւնի հաստ շերտով և փողոցները հաւասարեցնում կտուրներին, այնպէս որ, հէնց այդ խոր ձիւնի և սառնաշունչ ձմրան պատճառով չափաւոր ամբողջ շաբաթներ գիւղացիները չեն բաժանւում թոնրից և մասնաւոր երթևեկութիւնը կատարում են կտուրների վրայով։ Ձմրան ձիւնը մնում է ամբողջ 4 ամիս, Դեկտեմբերից սկսած մինչև Մարտի վերջը։ Երկար և անտանելի ձմրան յաջորդում է հրաշալի կանաչ, սիրուն գարունը, ուր առաւօտեան փչում է հազարաւոր ծաղիկների բոյրով գրկախառնւած անուշ հովիկը և կեանք է ներշնչում մարդու։ Գարունից յետոյ գալիս է գեղեցիկ և պճնազարդ ամառը, այնպէս որ, երեք ամսւայ ընթացքում բոլսերը, պտուղները և հունձը հասունանում են, սարերը ծաղկում, կանաչ կապում, և այդ ժամանակ էլ հովիւներն իրենց հօտերով բարձրանում են սարերը և այնտեղ մնում երեք-չորս ամիս։

Բայց գիւղերն առանձին-առանձին վերցրած, կլիմայական տեսակէտից տարբերւում են միմեանցից. կան տեղեր, ուր ամառն աւելի շոգ է, բայց կան և տեղեր, ուր աւելի